

ՄՓԻՌՔԻ ՆԵՐԿԱՅ ԳՈՅԱՎԻՃԱԿԸ ՈՒ ԱՆՈՐ ԱՊԱԳԱՅԻ ԾՐԱԳՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Մինչև 1992, Սփիւռքահայութիւնը իր երրորդ սերունդով, ըստ տեղական կարելիութիւններուն, տակաւին կը կառչէր իր ուրոյն ինքնութեան ու ներշնչուելով Հայաստանի մշակութային հպարտութեան աղբիւրներէն կ'ապրէր հաւատաւոր, շինարար գոյամարտի շրջան մը, միաժամանակ երագելով քաղաքական անկախութեան երանելի օրուան: Այժմ, անկախութենէն տասնամեակ մը ետք, երազը սկսած է վերածուիլ աշնանամուտի տերեւաթափուող տխուր իրականութեան ու մշակութային հպարտութեան աղբիւրները գունաւորուած են այլատերող արժէքներով: Իսկ Սփիւռքահայութիւնը, որպէս տարտղնուած բազմատեսակ հաւաքականութիւններ, գերագոյն ղեկավարութեան մը բացակայութեան, լռելեայն կը սպասէ Կոտոյին:

Սփիւռքի երրորդ եւ չորրորդ սերունդներուն համար, ազգային հաւաքական ու անհատական ինքնութիւնը նոյնը չէ ինչ որ էր առաջին եւ երկրորդ սերունդներուն պարագային: Ինքնութիւնը կազմող հիմնական տարրերը՝ ազգային հաւատք, նպատակ, մտայնութիւն, ասանդական սովորութիւններ, արժէքներ, ընկերային վարք ու բարք, տնտեսական կարգավիճակ եւ մշակութային ժառանգ, ժամանակի ընթացքին, էական փոփոխութիւններու ենթարկուած են տարբեր միջավայրերու ու պայմաններու ազդեցութեամբ: Մինչդէռ՝ նոյն ժամանակամիջոցին մեր ազգային կառոյցները մնացած են ինչ որ էին տասնեակ տարիներ առաջ, իրենց վարչական անյարմարութիւններով, ստեղծելով խորացող խրամատներ տարբեր սերունդներու հետաքրքրութիւններուն, կարողականութեան ու ակընկալութիւններուն միջեւ: Հետեւաբար, բոլորս մտահոգ ենք ու կ'ափսոսանք հաստատուելով թէ մեր դպրոցներուն աշակերտութեան ընդհանուր թիւը տարուէ տարի կը նուազի, մեր երբեմնի նախանձելի մշակութային շարժումները վերածուած են տարեկան ձեռնարկներու, մամուլն ու գրականութիւնը լուռ ցաւերով կը տառապին, ակումբներուն մէջ պատանեկան եւ երիտասարդական շարժումները կորսնցուցած են իրենց նախկին խանդավարութիւնն ու ընդհանուր անտարբերութիւն մը կը տիրէ մեր համայնքային ու միութեանական գործունէութիւններուն հանդէպ:

Պատասխանատուութեան ամենակարեւոր բաժինը կը վերագրուի ղեկավարութեան: Սակայն, բոլոր մակարդակներու վրայ, կամայ թէ ակամայ, գիտութեամբ կամ անգիտակցաբար մենք չենք կարողացած նախատեսել մեր ինքնութիւնը աղաւաղող արտաքին պայմաններուն բնոյթն ու տարողութիւնը, եւ մեծ նուիրումով ու հաւատքով շարունակած մեր աշխատանքը, առանց հարցաքննելու անոր յարմարաւետութիւնը՝ յեղաշրջուող պայմաններուն: Բաւականանալով անմիջական ներկայի պահանջներուն

մատակարարումովը, մեր հաւաքական ապագան ծրագրելու տեսիլքն ու կամքը անտեսուած են:

Անյիշատակ ժամանակներէ իվեր, ազգային ինքնարժեւորումի եւ համապարփակ հայեցողութեան մը բացակայութեան, կարելի չէ եղած սահմանել մեր ազգային հիմնական նպատակները: Հագուադէպ պարագաներուն միայն, սրբազան փոքրամասնութեան մը հերոսական պայքարը մեր բուսական կրաւորականութիւնը վերածած է ուժականութեամբ լեցուն վերածնունդի: Ընդհանրապէս տիրապետուած արտաքին իրարյաջորդ ուժերու կողմէ, վերապրած ենք՝ միջոցները վերածելով նպատակներու:

Իմաստութեան սկիզբը ինքնաճանաչումն է, առանց ինքնախաբէութեան, իր ամբողջութեան մէջ: Սակայն, բաւարար չէ միայն մատնանշել ու ցանկագրել մեր տկարութիւնները. այլ՝ հարկ է փնտռել անոնց ծնունդ տուող դրոշմապատճառները եւ իրապաշտօրէն փորձել շրջանցել զանոնք, առաջարկելով նպատակայարմար այլ լուծումներ՝ գործնական կարելիութիւններու սահմանին մէջ:

Որո՞նք էին եւ որոնք են այսօր Լիբանանի տիպար Հայուն յատկանիշները: Որո՞նք էին եւ որոնք են այսօր մեր հաւաքական ու բարոյական արժէքները: Որպէս Լիբանանի Հայ համայնք որո՞նք են մեր հասարակական թերութիւններն ու արժանիքները: Որո՞նք են մեր ներքին ու արտաքին անհատական ու հասարակական ապահովութեան լծակները եթէ անոնք գոյութիւն ունին կամ՝ պէտք է ունենան: Որո՞նք են մեր հասարակական պատճառարկումները որպէս անհատներ ու կազմակերպութիւններ: Ինչ է մեր ազգային հաւատամքը: Տասը, քսան, հարիւր տարի ետք ուր կ'ուզենք հասնիլ, Լիբանանի մէջ կամ այլուր: Ինչո՞ւ, ի՞նչպէս, ի՞նչ իրագործելու համար: **Ներկայի մտածողութեամբ երբ չենք գիտեր ուր կ'ուզենք հասնիլ, անյեթեթ կ'ըլլան հոն հասնելու բոլոր միջոցները:**

Մեր կրթական հաստատութիւններէն շրջանաւարտ եղած են հազարաւոր պատանիներ հայեցի դաստիարակութեամբ թրծուած : Հաւատաւոր ուսուցիչներ մեծ նուիրումով դաստիարակած են Հայութեան տեսականութեան հաւատացող եւ մանաւանդ՝ սատարող Հայեր: Ի՞նչ ոյժ կը ներկայացնեն անոնք, ու՞ր կը գտնուին: Ոպէս Հայ ինչո՞ւ, մինչեւ ե՞րբ: Ո՞վ է Սփիւռքի տիպար Հայը: Ի՞նչ չափանիշներով: Ապագայի սերունդներէն արդէօք քանիներ տակաւին պիտի յիշեն իրենց ազգային պատկանելիութեան արձատները: Ինչո՞ւ Ինչպէ՞ս կարելի է զանոնք զօրակոչի ենթարկել որպէսզի մաս կազմեն մեր հասարակական կեանքին, իրենց բարոյական ու նիւթական ներդրումներով, գոհունակութեամբ եւ գոյութեանական պատճառարկումներով: Որո՞նք են յաջողութեան նախապայմանները այդպիսի ծրագիրի մը:

Առանց այս հարցումներուն բացորոշ ու համապարփակ պատասխանները ունենալու եւ անոնց արդիւնք եղող ստեղծագործական մտածողութեամբ նպատակայարմար մոր ծրագիրներու սահմանումին ու կառոյցներու հաստատման, մենք կը շարունակենք զբաղիլ առօրեայ տաղտուկներով մոռնալով կենսական հարցերը:

Որպէս ազգ, Հայաստան եւ Սփիւոք գործակցաբար, կամ առանձին առանձին, վտանգաւոր յապաղումով, անհրաժեշտ է որ ծրագրենք մեր յառաջիկայ հարիւր, յիսուն եւ տասը տարիներու ապագան: Տեսիլքը, տեսական մտածողութիւնն ու երազը նոյնքան էական են որքան ամենօրեայ գործնական իրագործումները: Որպէս հաւաքականութիւններ, առանց տեսիլքի ու յստակօրէն սահմանուած նպատակներու, մենք չենք կրնար ունենալ նպատակասլաց եւ համապարփակ աշխատանք, քաղաքական, ընկերային, տնտեսական, մշակութային եւ կրթական մարզերուն մէջ: Այժմ, յուսալքումի հասնող անտարբերութեամբ, մենք ժամանակին յանձնած ենք մեր բոլոր հարցերուն լուծումը, սպասելով Կոտոյին:

Որպէս տարբեր երկիրներու քաղաքացիներ, ժամանակի ընթացքին, մեր ազգային ինքնութեան յեղաշրջումն ու աղաւաղումը անխուսափելի է: Միաժամանակ, պատկանիլ հաւաքականութեան մը, բնագոյական սպահովական պահանջք մըն է ու ընկերային իրողութիւն: Ի՞նչպէս կարելի է հաշտեցնել այդ երկու հակոտնեայ մղումները, դրական ձեւով, անյետաձգելի մարտահրաւէր մըն է որ Սփիւոքի ազգային ղեկավարութիւնը պէտք է դիմադարձէ, ի շահ ամէն Հայ անհատի եւ Հայաստանի Հանրապետութեան: Կարելի է պահպանել Սփիւոքի Հայկական գաղութներու մշակութային ինքնութիւնը, բարելաւելով անոնց տնտեսական ու ընկերային համակարգը եւ վերակազմաւորելով հասարակական կեանքի ոլորտները, համերաշխ գործակցութեան ու զօրակցութեան գաղափարը վերածելով անհատական ու հաւաքական յառաջդիմութեան հիմնաքարի:

Սփիւոքի տարածքին, հայապահպանման ասանդական միջոցներու – լեզու, եկեղեցի, ընտանիք, դպրոց, քաղաքական կազմակերպութիւններ, մշակութային միութիւններ եւ ակումբներ – կողքին, մոր եւ գործնապաշտ միջոցներ պէտք է այլապէս բաւարարեն գոյութեանական պէտքեր ու իղձեր, զօրացնելով կապը անհատներու միջեւ որոնք հպարտ ըլլան իրենց պատկանելիութեամբ, եւ որոնց համար Հայ ըլլալը ունենայ նաեւ գոյութեանական առաւելութիւններ: Այդ մէկը կարելի է իրագործել երբ ներքին նպատակասլաց զօրակցութեամբ կարենանք օգտագործել մեր անհատական, ընկերային, տնտեսական ու քաղաքական բարեկամութիւններն ու փոխ-շահաւետութեան վրայ հիմնուած միջազգային կապերը, կազմակերպուած լոպիինկի միջոցներով, բարձրագոյն մակարդակներու վրայ ու շրջանակներու մէջ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան առաքելութեան ամենէն էական տարրը եղած է ու տակաւին մնայ ըլլալ՝ կրթական մարզը. հակառակ վերջերս տարածուող հարցադրումներուն, կասկածներուն ու հրապարակային բանավեճերուն:

Կրթական որեւէ համակարգ, ցանց կամ հաստատութիւն պէտք է ունենայ յստակօրէն սահմանուած առաքելութիւն, ու զայն իրականացնելու պատշաժ ծրագիր, յարմարատեղ միթա-բարոյական կազմակերպութեամբ: Ընդհանրապէս, կրթական ծրագիրի մը նպատակակէտերը կարելի է նկատել, հոգիի, միտքի եւ մարմնի հաւասարակշռուած զարգացումը, գիտելիքներու պաշարին առընթեր կազմաւորելով բարիին ու գեղեցիկին սէրը, համագործակցութեան եւ պատասխանատուութեան զգացումը, դժուար կացութիւններ դիմագրաւելու կարողութիւնը ու ընկերային յարաբերութիւններու շնորհը:

Սփիւռքահայ կրթական համակարգի պարագային, մարդուն ու քաղաքացիին պատրաստութեան առաքելութիւնը աւելի կը կնճոռոտի ընդգրկելով իր ծիրին մէջ հայեցի դաստիարակութիւնը, այսինքն՝ հայութեան յանրժողութեան հաւատացող, հայերէն մտածող ու աղօթող, եւ դարերու ազգային մշակութային ժառանգութիւնը պահպանող ու տարածող անձերու պատրաստութիւնը:

Կը կնճոռոտի որեւէտես, Սփիւռքի պատմութեան ութը տասնամեակներէն ետք տակաւին կը փորձենք անտեսել այն իրողութիւնը թէ, որպէս ամբողջական քաղաքացիներ մեր ապրած երկիրներուն, մեր շրջապատի դրական ու ժխտական բազմադիւր ազդակները մեր հաւաքական ու անհատական ինքնութիւնը եղափոխութեան ենթարկելով, մեզի կը ստիպեն վերարժեւորել տարիներու ընթացքին ժամանակավրէպ դարձած սովորութիւններ ու կրթական ծրագիրներ, սկանչալուր ըլլալով նոր սերունդի ծնողներուն եւ անոնց զաւակներուն սկնկալութիւններուն, ազգային կրթական համակարգին նպատակը, խորքն ու ձեւը այժմէականացնելու հրամայականով:

Մելքոնեան Կրթական Հաստատութեան ճակատագրին շուրջ զարգացող հրապարակային բանավեճը իր բարոյական, օրինական, տնտեսական, կրթական, ֆինանսական եւ աշխարհագրական տուեալներու վրայ հիմնուած թեր ու դեմ արժեւորումներով պէտք է դրուի ազգային ապագայապաշտ քաղաքական ու ընկերային կենսական նկատառումներու ծիրին մէջ:

Առարկայական եւ գործնապաշտ չափանիշները էական կը նկատուին երբ քննադատութիւնները շինիչ են ու կը միտին հասնիլ աւելի նպատակաշարմար արդիւնքներու, կարուցողական բարեփոխումներու միջոցաւ: Որպէս Սփիւռքի ամենէն բեղուն կրթական հաստատութիւններուն անդրանիկը՝ Մելքոնեանը պէտք է ըլլայ

